ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 17.03/107
17.03.2014 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

Հարգելի պարոն Շահինյան,

Հայտնում եմ Ձեզ այն մասին որ, սույն թվականի փետրվարի 22-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել Կարեն Գևորգյանին անօրինական ազատությունից զրկելու և նրա նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ: Կազմակերպության հանցագործության մասին հաղորդման հիման վրա ՀՀ ՀՔԾ հատկապես կարևորագույն գործերով քննիչի պաշտոնակատար Ա. Հարությունյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հատկանիշներով 2014թ. մարտի 12-ին հարուցվել է քրեական գործ:

2014թ. մարտի 1-ին ԼՂՀ ոստիկանության ՔՎ ՀԿԳ ՔԲ ՀԿԳ ավագ քննիչ Հ. Իշխանյանի կողմից կայացվել է Կարեն Մուշեղի Գևորգյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2014թ. մարտի 17-ին Կարեն Գևորգյանը կազմակերպությանը հայտնել է, որ նույն օրը վերը նշված քննչական վարչության քննիչ Հ. Իշխանյանը զանգահարել է իր հորը՝ Մուշեղ Գևորգյանին և ասել, որ Կարենը ներկայանա ԼՂՀ քննչական վարչություն:

Կազմակերպությունը մտահոգված է Կարեն Գևորգյանի նկատմամբ ԼՂՀ իրավապահ մարմինների կողմից հնարավոր ճնշումների և ոտնձգությունների մասով, քանի որ այդ նույն մարմնի աշխատակիցների նկատմամբ ՀՀ ՀՔԾ-ում հարուցվել է քրեական գործ բռնությունների և ապօրինի ցուցմունքներ կորզելու փաստով: Բացի դրանից գտնում եմ, որ նման պայմաններում չի ապահովվում Կ. Գևորգյանի նկատմամբ հարուցված քրեական գործի, ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով երաշխավորված օբյեկտիվ քննության իրավունքը, քանի որ վարույթն իրականացնող մարմինը արդեն իսկ ունի սուբյեկտիվ վերաբերմունք Կ. Գևորգյանի նկատմամբ:

Ավելին Կ. Գևորգյանին ԼՂՀ քննչական վարչության աշխատակիցների կողմից կրկին անգամ հարցաքննելը ինքնին հոգեբանական մեծ ճնշում է, քանի դեռ իր նկատմամբ բռնություն կիրառած մարմիններն են ներգրավված լինելու իր նկատմամբ իրականացվող քննչական գործողություններում: Քանի որ նա յուրաքանչյուր վայրկյան պետք է հիշի իր նկատմամբ կիրառված անմարդկային վերաբերմունքը և այն մտավախությունը, որ կարող է իր նկատմամբ անմարդկային վերաբերմունքը կրկնվել, հայտնվելու է հոգեբանական տառապանքի մեջ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կ.Գևորգյանը իր նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական ճնշումների, բռնությունների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մեջ մեղադրում է ոստիկանության այն աշխատակիցներին, ում կողմից կանչվում է հարցաքննության, դիմում եմ Ձեզ, որպես ՀՀ քաղաքացի Կ. Գևորգյանի իրավունքների պաշտպանության երաշխիք անձնական անվտանգությունն ապահովելու կամ նրա նկատմամբ հարուցված քրեական գործի քննությունը ՀՀ տեղափոխելու պահանջով:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926024